

ՀԱԳՄՉ 14.10

Առաջին հրատարակություն
1 օգոստոսի 2007թ.
Ներառում է փոփոխություններ

Հակաականային գործողությունների միջամտության գնահատման նախագիծ

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	v
Ներածություն	vi
Հակաականային գործողությունների գնահատման ուղեցույց.....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Գնահատում՝ ընդհանուր դրույթներ	2
5. Գնահատման նպատակ	3
6. Գնահատման չափանիշներ.....	3
6.1. Չափանիշներ	3
6.2. Գնահատումը բարդ արտակարգ իրավիճակներում	4
7. Գնահատման տեսակներ	5
7.1. Ընդհանուր	5
7.2. Գործողության գնահատական	5
7.3. Արդյունքի գնահատում	6
7.4. Ազդեցության/հետևանքների գնահատում	6
7.5. Ֆորմատիվ գնահատում	6
8. Գնահատում՝ ընդհանուր սկզբունքներ	6
9. Մոնիտորինգ և աուդիտ	7
9.1. Մոնիտորինգ.....	7
9.2. Աուդիտ	7
10. Գնահատում՝ պլանավորման նկատառումներ	8
10.1. Ընդհանուր	8
10.2. Սահմանված կարիք	8
10.3. Ճիշտ ժամանակահատված	8
10.4. Ներդաշնակեցում.....	8
10.5. Շահագրգիռ կողմերի մասնակցություն	9
10.6. Գնահատման ծավալ	9
10.7. Պատասխանատվություն	9
11. Գնահատման նախագծում/դիզայն.....	10
11.1. Ընդհանուր	10
11.2. Գնահատման համատեքստ	10
11.3. Գնահատման սուբյեկտ.....	10
11.4. Գնահատման նպատակ	10
11.5. Գնահատման ծավալ	10
11.6. Հատկորոշիչ նպատակներ և գնահատման խնդիրներ/հարցեր	11
11.7. Գնահատման չափանիշներ	11
11.8. Մեթոդաբանություն.....	11
11.9. Աշխատանքային պլան, կազմակերպում և աջակցման խնդիրներ	11
11.10. Զեկուցման պահանջներ	12
12. Գնահատումների իրականացում	12

12.1.	Գնահատողների ներգրավում և աշխատանք նրանց հետ	12
12.2.	Գնահատման աշխատանքային պլանի մշակում	13
12.3.	Գնահատման իրականացում	13
12.4.	Զեկուցում	14
12.5.	Տարածում	16
13.	Գնահատման առաջարկությունների կատարում	17
14.	Գնահատման սուբյեկտների/առարկաների իրավունքներ և պարտավորություններ....	17
14.1.	Ընդհանուր	17
14.2.	Հնարավորություններ	18
15.	Պարտավորություններ	18
15.1.	Միավորված ազգերի կազմակերպություն	18
15.2.	Հակաականային գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	18
15.3.	Հակաականային գործողությունների կազմակերպություններ	19
15.4.	Դոնորներ.....	19
15.5.	Գնահատման թիմ	20
	Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	21
	Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	22
	Փոփոխությունների գրանցում	24

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Վերջին տարիների ընթացքում հակաականային գործողությունների զարգացմանը զուգահեռ հատուկ ուշադրություն է սկսում տրվել հակաականային գործողությունների նկատմամբ հանրային ոլորտի պատասխանատվության ամրապնդմանը, նկատվել է ոլորտի ներսում արհեստավարժության խրախուսման լուրջ ներդրում/խոստում, և ավելի մեծ նշանակություն է տրվում “արդյունքների վրա հիմնված” հակաականային գործողություններին: Այս ամենը հանգեցրել է գնահատումների առավելությունների մասին ավելի ընդարձակ իրազեկմանը՝ հակաականային գործողությունների միջամտությունների վերաբերյալ օբյեկտիվ, ժամանակին, համապատասխան և ճշգրիտ հետադարձ կապն ապահովելիս:

Այս տեղեկնքը զարգացավ մի այնպիսի աստիճանի, երբ գնահատման կարիքի նկատառումը դառնում է հակաականային գործողությունների պլանավորման մի առանցքային բաղադրիչ: Բացի դրանից հակաականային գործողությունների շատ հաճախորդներ և դոնորներ պնդում են, որ գնահատումները լինեն որպես կոմերցիոն պայմանագրերի և ֆինանսավորման համաձայնագրերի բաղադրիչ: Գնահատումները լայն ճանաչում ունեն որպես հակաականային գործողությունների կարևոր մի տարր և որպես նախագծի կամ ծրագրի ընթացքի մի առանձին փուլ:

Գնահատման ծավալը հսկայական է: Գնահատումներ կարելի է անցկացնել հակաականային գործողությունների քաղաքականության վերաբերյալ կամ էլ հակաականային գործողությունների ծրագրի շրջանակներում որևէ ծրագրի կամ նախագծի վերաբերյալ: Գնահատումներ կարելի է իրականացնել հակաականային գործողությունների առանձին ասպեկտների վերաբերյալ (օրինակ՝ Ականների վտանգի իրազեկում, ԱՎԻ): Բացի դրանից գնահատումները կարող են ընդամենն ուսումնասիրել նախագծի կամ ծրագրի դիզայնը, պլանավորումն ու իրագործումը; կամ էլ կարող են գննել այս բոլոր ասպեկտները, ներառյալ իրագործմանը հաջորդող արդյունքները և միջամտության հաստատուն կայունությունը:

Սույն չափորոշիչի նպատակն է ընդհանուր ուղեցույց ապահովել հակաականային գործողությունների գնահատումների նախապատրաստման և իրականացման վերաբերյալ, ինչպես նաև արդյունքների, եզրակացությունների, քաղած դասերի և առաջարկությունների զեկուցման, տարածման և օգտագործման վերաբերյալ:

Հակասկանային գործողությունների գնահատման ուղեցույց

1. Ծավալ

Սույն չափորոշիչի նպատակն է ուղենիշեր ապահովել հակասկանային գործողությունների գնահատման նախապատրաստման և իրականացման վերաբերյալ, ինչպես նաև գնահատման արդյունքների, եզրահանգումների, քաղած դասերի և առաջարկությունների զեկուցման, տարածման և օգտագործման վերաբերյալ:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

- ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.
- բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.
- գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՍ) տերմինը վերաբերում է ակնապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական զերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ակնազերծման գործողությունները: Հիմնականում Ակնազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՍ կամ գործում է նրա անունից հակասկանային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՍ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը:

“Արդյունք” տերմինը գնահատման առումով վերաբերում է այն ապրանքներին, արտադրության միջոցներին և ծառայություններին, որոնք ի հայտ են գալիս հակասկանային գործողությունների միջամտության արդյունքում: Արտադրանքը կարող է ներառել նաև միջամտության արդյունքում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք էական են արդյունքին հասնելու համար (օրինակ՝ տեղական կարողությունների զարգացում):

“Ելք” տերմինը գնահատման առումով վերաբերում է միջամտության արդյունքում կարճաժամկետ և միջնաժամկետ հնարավոր կամ ձեռք բերած ներգործությանը: Ելքը առնչվում են միջատության “արդյունավետության” հետ:

“Ազդեցություն/հետևանքներ” տերմինը գնահատման առումով վերաբերում է միջամտության պատճառով ուղղակիորեն կամ անուղղակիորեն, միտումնավոր կամ ոչ միտումնավոր կերպով ծագած դրական և բացասական, առաջնային և երկրորդական երկարաժամկետ ներգործությանը: Սա կարող է փոխարինել “վերջնական արդյունք” տերմինը:

“Տրիանգուլյացիա” տերմինը գնահատման առումով վերաբերում է տեղեկատվության բազմակի տեսությունների, աղբյուրների կամ տիպերի կամ էլ վերլուծությունների տեսակների կիրառմանը՝ հաստատելու և հիմնավորելու որևէ գնահատական: Պարտադիր չէ, որ մարդիկ լինեն տեղեկատվության աղբյուրներ, բայց դրանք ներառում են փաստաթղթեր, քարտեզներ, լուսանկարներ, արբանյակային պատկերներ և այլն:

“Միջամտություն” տերմինը գնահատման առումով վերաբերում է որևէ գործողությանը, նախագծին, ծրագրին կամ քաղաքականությանը:

4. Գնահատում՝ ընդհանուր դրույթներ

Գնահատումը նշանակում է որևէ գործողության, քաղաքականության, նախագծի կամ ծրագրի “արժեքի կամ նշանակալիության” սահմանման գործընթաց: Հակասականային գործողությունների գնահատման “արժեքը կամ նշանակալիությունը” առաջին հերթին որակվում է ականներից տուժած համայնքների, տարածքների և երկրների բնակիչների բարեկեցության մեջ տեղի ունեցած փոփոխությունների տեսանկյունից, ինչպես նաև իրենց սեփական զարգացումն ու առաջընթացը կառավարելու համար տեղական կարողությունների բարելավման տեսանկյունից՝ բավարարելու ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) ոչնչացման առումով այդ երկրների միջազգային պարտավորությունները: Հակասականային գործողությունները և ուղղակի ապրանքները (օրինակ՝ վնասազերծված տարածքներ, մարդկանց համար Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կազմակերպում, աջակցություն տուժածներին և այլն) նույնպես հաշվի են առնվում գնահատման ժամանակ, բայց հիմնականում որպես ցանկալի վերջաբան խթանելու միջոցներ (օրինակ՝ թիրախային շահառուների բարելավված բարեկեցություն; տեղական կարողությունների զարգացում; առաջընթաց միջազգային պարտավորությունների առումով). դրանք իրենց էությամբ հակասականային գործողությունների նախագծի կամ ծրագրի որևէ արժեք չեն ներկայացնում:

Գնահատման մի շարք ընդհանուր սահմանումներ կան, սակայն այն մեկը, որը ճշգրիտ կերպով նկարագրում է գնահատման գործընթացը, բերված է ստորև:

Գնահատումը “ընթացիկ կամ ավարտված նախագծի, ծրագրի կամ քաղաքականության, դրա դիզայնի, իրագործման և արդյունքների հնարավորինս համակարգված և օբյեկտիվ որակումն է: Դրա խնդիրն է սահմանել նպատակների կարևորությունն ու իրականացումը, զարգացման գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և հաստատուն կայունությունը: Գնահատումը պետք է վստահելի և օգտակար տվյալներ ապահովի՝ հնարավոր դարձնելով քաղած դասերի ներառումը թե աջակցություն ստացողների և թե դոնորների կողմից որոշումներ ընդունելու գործընթացում¹.”

Այս սահմանումն ընդգծում է՝

ա. Գնահատման նկատմամբ համակարգված և օբյեկտիվ մոտեցման կարիքը:

¹ Զարգացման աջակցության գնահատման սկզբունքները, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, DAC, 1991թ., պարբերություն 5:

բ. Նախագծի կամ ծրագրի գնահատման հնարավորությունն իրագործման ընթացքում (ֆորմատիվ գնահատում) կամ ավարտից հետո (սումատիվ գնահատում);

գ. Նախագծի ամբողջական փուլի ուսումնասիրման կարիքը՝ դիզայնից մինչև իրագործում և վերջնական արդյունքներ՝ ըմբռնելու դասերի մի ամբողջ փաթեթ, որով կառաջնորդի ծրագրի հետագա իրագործումը և բարելավվի ապագա պլանավորումը;

դ. Գնահատման արդյունքները հնարավորինս լայն տարածում պետք է ստանան, ներառյալ դոնորներին, ԱԳԱՄ-ներին և միջամտության շահառուներին:

Գնահատումը պարզապես տվյալների համակարգված հավաքագրում և մշակում չէ: Գնահատումը պահանջում է վճռական խնդիրների հատկորոշում, որոշումների առումով նախապատմության և պատճառաբանության սահմանում, պատճառների և ազդակների վերլուծություն և որոշ դեպքերում հնարավոր հետագա արդյունքների կանխատեսում:

5. Գնահատման նպատակ

Գնահատման հիմնական նպատակներն են՝

- a) Գործողության բարեփոխում՝ հակաականային գործողությունների նախագծի կամ ծրագրի հետևանք հանդիսացող արդյունքների կամ տեղացի մարդկանց և կազմակերպությունների բարելավված բարեկեցության և կարողությունների առումով;
- b) Բարձրացնել շահագրգիռ կողմերի (դոնորներ, ԱԳԱՄ, թիրախային շահառուներ և այլն) պարտավորությունը:

Գնահատումը պետք է փորձ կատարի օգուտ բերել բազմաթիվ շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև հակաականային գործողությունների ազդեցությունը կրող համայնքներին, հակաականային գործունեությունը հովանավորող դոնորական գործակալություններին, կառավարությանը և դրա աջակից մարմիններին, ինչպիսիքն են ԱԳԱՄ-ն ու ՀԱԿ-ը, և իրականացնող գործակալությունն ու նրա գործընկերները:

6. Գնահատման չափանիշներ

6.1. Չափանիշներ

Գնահատումն ուսումնասիրում է (կարճաժամկետ, միջնանաժամկետ և երկարաժամկետ) նպատակների և գործոնների իրագործումը, օրինակ՝ նշանակությունն ու կայուն հաստատությունը: Հակաականային գործողությունների գնահատման հարցում կարող են կիրառվել հետևյալ չափանիշները՝

- ա. Նշանակություն՝ այն ծավալը/խորությունը, համաձայն որի միջամտության նպատակները համահունչ են շահառուների պահանջներին, երկրի կարիքներին, գլոբալ գերակայություններին և դոնորների քաղաքականությանը:
- բ. Գործունեություն՝ միջոց, թե ինչպես են ռեսուրսները/ծախսերը (ֆինանսներ, վարպետություն, ժամանակ և այլն) տնտեսապես վերածվում հետևանքների (ապրանքներ և արդյունքներ):
- գ. Արդյունավետություն՝ այն ծավալը/խորությունը, համաձայն որի հասանելի են դառնում միջամտության նպատակները կամ ենթադրվում է դրանց հասանելիությունը՝ հաշվի առնելով դրանց հարաբերական կարևորությունը:

- դ. Ազդեցություն՝ միջամտության պատճառով ուղղակիորեն կամ անուղղակիորեն, միտումնավոր կամ ոչ միտումնավոր կերպով ծագած դրական և բացասական, առաջնային և երկրորդական երկարաժամկետ ներգործություն: Մա կարող է փոխարինել «վերջնական արդյունք» տերմինը:
- ե. Կայունություն՝ հակաականային գործողությունների միջամտության նպաստների/օգուտների շարունակություն, երբ հիմնական աջակցությունն արդեն ավարտվել է:
- զ. Ապահովություն և որակ՝ սա սկզբունքորեն վերաբերում է ականագերծման գործողություններին և անդրադառնում այն հարցին, արդյոք աշխատանքներն ապահով են ընթացել և հասել են այդ գործողության որակի պահանջվող չափորոշիչներին (օրինակ՝ տեխնիկական հետազոտում, վնասագերծում, նշագրում և այլն):

Վերոհիշյալ չափանիշներից նշանակությունը, գործունությունը, արդյունավետությունը և ապահովություն/որակը ամենադյուրինն են գնման համար: Նախագծի կամ ծրագրի երկարաժամկետ ազդեցության և կայունության սահմանումը դժվար է որակել, եթե գնահատումը տեղի չի ունենում միջամտության ավարտից հետո մի որոշ պահին:

Այլ ընդհանուր չափանիշները, որոնք կարող են ընդգրկվել հակաականային գործողությունների գնահատման համար, հետևյալն են՝

- ա. Արժեք փողի դիմաց (տնտեսում, գործունություն և արդյունավետություն);
- բ. Ծախսերի արդյունավետություն (օգտագործվում է՝ համեմատության ենթակա նպատակներին հասնելու համար կիրառվող այլընտրանքային միջոցները համեմատելիս);
- գ. Ծախսերի օգուտ (օգտագործվում է՝ այլընտրանքային նպատակներին հասնելու համար կիրառվող այլընտրանքային միջոցները համեմատելիս՝ անկախ նրանից, համեմատության ենթակա են, թե՛ ոչ);
- դ. Հաճախորդի բավարարում;
- ե. Շահառուի բավարարում;
- զ. Կրկնողունակություն (արդյոք նախագիծը կամ ծրագիրը կարող է կրկնօրինակվել մեկ այլ միջավայրում);
- է. ընդլայնելիություն (արդյոք նախագիծը կամ ծրագիրը կարող է ընդլայնվել իր ծավալում կամ «ընդարձակվել»):

6.2. Գնահատումը բարդ արտակարգ իրավիճակներում

Հաճախ հակաականային գործողությունների ծրագրերը մեկնարկում են «բարդ արտակարգ իրավիճակներում», երբ հակաականային գործողությունների կարիքն ու հրատապությունը շատ մեծ է, ռեսուրսները սահմանափակ են, իսկ արագորեն փոփոխվող միջավայրը դժվար է դարձնում պլանավորումը: Նման միջավայրում կարող է լրացուցիչ կամ այլընտրանքային չափանիշների օգտագործման կարիք զգացվել, այդ թվում՝

- ա. Ժամանակի սղություն՝ արտակարգ իրավիճակում կարիքավոր համայնքները հաճախ չեն կարող սպասել օգնությանը:
- բ. Շածկույթ՝ արդյոք բոլոր վտանգված համայնքներին է համարժեք աջակցություն ցուցաբերվել:

- գ. Համաձայնեցում՝ արդյոք տարբեր միջազգային դերակատարների (մարդասիրական, խաղաղապահ, խաղաղության բանակցություններին աջակցող դիվանագետներ և այլն) գործողությունները փոխադարձաբար համահունչ են:
- դ. Համակարգում՝ արդյոք տարբեր գործակալությունները համապատասխան ջանքեր են գործադրում՝ տեղեկատվություն կիսելու և իրենց գործողությունները համակարգելու համար:
- ե. Պաշտպանություն՝ արդյոք համարժեք ջանքեր են գործադրվում՝ պաշտպանելու վտանգված քաղաքացիներին և օգնության աշխատակիցներին:

7. Գնահատման տեսակներ

7.1. Ընդհանուր

Գնահատումները կարող են պատվիրվել՝ գնելու հակաականային գործողությունների միջամտությունների ստույգ կողմերը միայն կամ էլ կարող են պարփակել նախագծի ընթացքի ողջ ծավալը և արդյունքները, ներառյալ ազդեցությունը/հետևանքները: Ցանկացած գնահատման ծավալն ու շրջանակը կախված են պատվիրող մարմնի առանձնահատուկ պահանջներից և գնահատման ժամանակի ընտրությունից: Օրինակ, ընթացիկ նախագծի կամ ծրագրի ժամանակ անցկացրած գնահատման ժամանակ հնարավորություն չի լինի մանրամասնորեն ուսումնասիրելու երկարաժամկետ նպատակների իրականացումը: Ընդհանուր առմամբ գնահատումները կարող են բաժանվել չորս կարգերի՝

- ա. Գործողության գնահատական;
- բ. Արդյունքների գնահատում;
- գ. Ազդեցության/հետևանքների գնահատում;
- դ. Ֆորմատիվ գնահատում:

7.2. Գործողության գնահատական

Գործողության գնահատումների գնահատականը (ԳԳԳ) չափում է միջամտության իրականացման աստիճանը և թե որքանով են “արդյունքները” (կատարողականները) իրականացվել: ԳԳԳ-ները կիրառում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիքն են գործունեությունն ու տնտեսումը և հակաականային գործողությունների միջամտության ապահովության և որակի էական պահանջները: ԳԳԳ-ներն ուսումնասիրում են որևէ նախագիծ կամ ծրագիր մինչև այն փուլը, երբ արդյունքները (մաքրված հողատարածքներ, ԱՎԻ և այլն) հասանելի են դառնում թիրախային շահառուներին, եթե իրականացնող գործակալությունը նպատակ չի սահմանել ապահովելու նախատեսված շահառուների կողմից ապրանքների ճիշտ շահագործումը:

ԳՈԳ-ներն առնչվում են նյութական/չոչափելի չափանիշների հետ, օրինակ՝

- ա. Գործունեություն. արդյոք իրականացնող մարմինը կիրառել է պահանջվող ներդրումների/ծախսերի ճիշտ համակցությունը և նվազագույն ծավալը՝ ստանալու պահանջվող ապրանքները:
- բ. Արդյունավետություն. արդյոք ապրանքները հասանելի են դարձել պահանջվող բոլոր շահառուներին:
- գ. Տնտեսում. արդյոք իրականացնող մարմինն օգտագործել է նվազագույն արժեքները՝ ներդրումներ/ծախսեր կատարելիս (հաշվի առնելով որակը):

- դ. Ապահովություն. արդյոք այն գործողությունները, որոնց պատճառով ծախսեր են գոյացել, ապահով են իրականացվել:
- ե. Որակ. արդյոք ապրանքները եղել են ըստ պահանջվող կամ ավելի լավ որակի:

7.3. Արդյունքի գնահատում

Արդյունքի գնահատումը կարող է գնահատական տալ միջամտության բոլոր կողմերին, այդ թվում նաև արդյոք այն լավ մտահղացում է եղել և լավ դիզայն է ունեցել, և արդյոք այն հանգեցրել է շահառուների համար դրական արդյունքների: Արդյունքի գնահատումը կարող է նաև ուսումնասիրել կայունությունը:

Արդյունքի գնահատումը գնում է միջամտության ապրանքները և սահմանում, թե ինչպես են շահառուներն օգտագործում այդ ապրանքները՝ ստանալու սոցիալ-տնտեսական օգուտ (արդյունքի օրինակ՝ մաքրված հողատարածքի շահագործում հացահատիկ աճեցնելու համար կամ ԱՎԻ արդյունքում ավելի անվտանգ վարքագիծ) կամ էլ ինչպես են բարելավված գործողության համար կիրառում նոր կարողությունները:

7.4. Ազդեցության/հետևանքների գնահատում

Ազդեցության գնահատումը գնահատական է տալիս միջամտության երկարաժամկետ հետևանքներին (պլանավորած և չմտածված; դրական և բացասական): Ազդեցության գնահատումը ամենադժվար տեսակն է իրականացման համար, քանի որ պահանջվում է որակում տալ այն բանին, ինչ տեղի է ունենալու ապագայում, և ինչ տեղի կունենար, եթե չլինեք հակաականային գործողությունների միջամտությունը: Բացի դրանից ազդեցության գնահատման, ինչպես նաև ավելի թույլ կերպով արդյունքի գնահատման դեպքում, կան մի նախագծին կամ ծրագրին չպատկանող մի շարք ներգործություններ, որոնք ազդում են արդյունքների վրա: Այդ գործոնները, որոնք ներառում են քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոններ, ինչպես նաև այլ նախագծերի կամ ծրագրերի գործողությունը, նույնպես պետք է գնվեն՝ պարզելու այն ծավալը/խորությունը, ըստ որի այդ գործոններն ազդել են գնահատման ենթակա դարձած միջամտության հետևանքների վրա:

7.5. Ֆորմատիվ գնահատում

Ֆորմատիվ գնահատումը միտված է գործողության բարելավմանը և ամենահաճախակին է իրականացվում նախագծերի կամ ծրագրերի իրագործման փուլում: Ֆորմատիվ գնահատումը կիրառվում է՝ ծրագրի ղեկավարներին և այլ անձնակազմին հետադարձ կապն ապահովելու նախագծի կամ ծրագրի բաղադրիչների մասին, որոնք գործում են կամ էլ կարիք ունեն փոփոխվելու:

8. Գնահատում՝ ընդհանուր սկզբունքներ

Գնահատման ծավալն ու շրջանակը տարբեր կլինի հակաականային գործողությունների միջամտություններում, սակայն կիրառվում են որոշակի ընդհանուր սկզբունքներ՝

- ա. Գնահատումը պետք է իրականացվի միայն այն դեպքում, երբ առկա է հակաականային գործողությունների նախագծի կամ ծրագրի վերաբերյալ անկախ և անկողմնակալ որակման սահմանված կարիք;
- բ. Գնահատման պլանավորումը պետք է ընդգրկված լինի միջամտության բնօրինակի դիզայնում, այդ պատճառով էլ հավաքագրվում են հիմունքային տեղեկատվություն և առաջընթացի ցուցանիշներ՝ գնահատում իրականացնողներին ապահովելով անհրաժեշտ վկայությամբ:

- գ. Գնահատումը պետք է օգտակար լինի: Ըստ էության գնահատումը միտված է բարելավելու միջամտության պլանավորումն ու իրագործումը, այն նպաստում է որոշումների ընդունմանն ու ռազմավարության ձևավորմանը;
- դ. Հնարավորության դեպքում գնահատումը պետք է համագործակցական նախաձեռնություն լինի՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ;
- ե. Գնահատման արդյունքները պետք է տրամադրվեն բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև հակաակնադիմ գործողությունների միջամտության շահառուներին²:

9. Մոնիտորինգ և աուդիտ

9.1. Մոնիտորինգ

Մոնիտորինգը նպաստում է գնահատմանը՝ ապահովելով քանակական և որակական տվյալներ արդյունքների իրականացման և նվաճման վերաբերյալ: Մոնիտորինգի տվյալներից առաջին հերթին օգտվում են նախագծի/ծրագրի ղեկավարները, սակայն դրանք պետք է նաև հավաքագրվեն և պահպանվեն, որպեսզի դրանցից կարողանան օգտվել գնահատում իրականացնողները: Բացի պլանին կամ ընթացակարգերին համապատասխանությունը սահմանելուց մոնիտորինգը կարող է նաև գնահատել՝

- ա. խնդիրների լուծման կամ արդյունքների նվաճման առաջընթաց;
- բ. համապատասխանեցում որակի և ապահովության չափորոշիչներին;
- գ. այն միջավայրի փոփոխություն, որում տեղի է ունենում միջամտությունը: Նման տեղեկատվությունը կաջակցի գնահատմանը՝ նշելով միջամտության վրա ներգործող որոշ արտաքին գործոններ:
- դ. նախագծի կամ ծրագրի շահառուների բարեկեցության փոփոխություն, որը կնպաստի գնահատմանը՝ սահմանելու արդյունավետությունն ու հնարավոր ազդեցությունը:

Մոնիտորինգն ու գնահատումը պետք է միասին հաշվի առնվեն՝ որևէ միջամտություն նախագծելիս և պլանավորելիս:

9.2. Աուդիտ

Աուդիտն ու գնահատումը միմյանց լրացնող գործառնություններ են, և նրանց միջև կա որոշ համընկնում: Աուդիտը կառավարման վերահսկման համարժեքության գնահատումն է՝ ապահովելու ռեսուրսների տնտեսողական և գործունյա օգտագործումը, ակտիվների/միջոցների ապահովության երաշխավորումը, ֆինանսական և այլ տեղեկությունների արժանահավատությունը, համապատասխանեցումը կանոնակարգերին, կանոններին և սահմանված քաղաքականությանը, ռիսկի կառավարման արդյունավետությունը և կազմակերպական կառուցվածքների, համակարգերի և գործընթացների համարժեքությունը:

Աուդիտը մի գործողություն է, որը նախագծվել է՝ վստահեցնելու շահագրգիռ կողմերին, որ գործառնությունները համապատասխանում են կիրառելի օրենքներին, կանոնակարգերին, չափորոշիչներին և նորմերին (համապատասխանեցման աուդիտ), կամ էլ որ գործողության համաձայնեցված խնդիրները լուծվում են տնտեսող և գործունյա կերպով (գործողության աուդիտ):

² Որոշ դեպքերում գնահատման զեկույցը չի կարող տրամադրվել բոլոր շահագրգիռ կողմերին, քանի որ այն պարունակում է կոնֆիդենցիալ կամ կոմերցիայի տեսանկյունից գաղտնի տեղեկություններ: Այնուամենայնիվ ջանքեր պետք է գործադրվեն, որպեսզի գնահատման համապատասխան արդյունքները փոխանցվեն բոլոր շահագրգիռ կողմերին, տես բաժին 12.5-ը:

Առողիտի ուշադրության կենտրոնում են գործառնություններն ու կառավարման վերահսկումը; առողիտը որակում է դրանք ըստ քիչ, թե շատ հստակորեն մշակված նորմերի կամ չափորոշիչների (օրինակ՝ ՀԱԳՄՉ-ներ), մինչդեռ գնահատման ծավալն ավելի լայն է և ընդգրկում է ավելի խորը ռազմավարական հարցեր՝ ընդարձակ սկզբունքների և չափանիշների հիման վրա կայացրած որոշումներով և տարբեր մոտեցումներով, որոնք կարող են կիրառվել՝ տարբեր տեսանկյուններից որակելու նախագծի կամ ծրագրի արժեքը:

Առողիտը ծառայում է հետևյալ հիմնական նպատակներին՝

- ա. Ապահովել համապատասխանեցում սահմանված նորմերին կամ չափորոշիչներին (օրինակ՝ ՀԱԳՄՉ-ներ կամ կազմակերպության ԳՄԸ-ներ);
- բ. Բարձրացնել հակաականային գործողությունների համար վճարողների առջև պատասխանատվությունը (հակաականային գործողությունների դոնորներ, ենթակառուցվածքային աշխատանքները ֆինանսավորողներ կամ առաջնային կապալառուներ և այլն);
- գ. Գործողության բարելավում գործառնությունների առումով՝ հակաականային գործողությունների նախագծի/ծրագրի ռեսուսային ծախսեր ու գործողություններ և հակաականային գործողությունների ապրանքների և ծառայությունների ուղղակի արտադրանք, կարճ ասած՝ “գործը ճիշտ անել”:

10. Գնահատում՝ պլանավորման նկատառումներ

10.1. Ընդհանուր

Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք պետք է հաշվի առնել՝ գնահատումը նախագծելիս: Դրանք հակիրճ ներկայացված են ստորև:

10.2. Սահմանված կարիք

Գնահատումը պետք է պլանավորել միայն այն ժամանակ, երբ առկա է հակաականային գործողությունների նախագծի կամ ծրագրի (կամ դրա որևէ հատվածի) վերաբերյալ անկախ և անկողմնակալ գնահատման սահմանված կարիքը, և առկա է այն մտադրությունը, որ գնահատման արդյունքները կկիրառվեն գործողության և պատասխանատվության բարելավման համար:

10.3. Ճիշտ ժամանակահատված

Գնահատման արդյունքները հաճախ կիրառվում են՝ նախագծի կամ ծրագրի ընթացքում վճռական որոշումներ ընդունելիս, այդ պատճառով էլ գնահատումը պետք է պլանավորել նախօրոք՝ ապահովելու բավարար ժամանակի առկայություն՝ գնահատումն իրականացնելու, արդյունքների մասին զեկուցելու և դրանք տրամադրելու համար: Այս ամենն ապահովում է, որ առաջարկություններն ու փորձն առկա լինեն նախքան վճռական որոշումներ կայացնելը:

10.4. Ներդաշնակեցում

Գնահատումը նշանակալի պահանջներ է դնում ԱԳԱՄ-ի, հակաականային գործունություն իրականացնող կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի անձնակազմի առջև: Եթե իրագործելի է, ապա գնահատում պատվիրող կազմակերպությունները պետք է փորձեն ներդաշնակեցնել գնահատման իրենց պլանները և նախաձեռնել համատեղ գնահատումներ³:

³ Ներդաշնակեցմանը նպաստելու համար պատվիրող կազմակերպությունները պետք է տեղեկացնեն ՄԱԺՄԿ-ին, որպեսզի պլանավորած գնահատումը փակցվի “Գնահատման և ուսումնասիրությունների օրացույցում”, www.gichd.org/calendars/evaluations-and-studies-calendar/ կայքէջում:

10.5. Շահագրգիռ կողմերի մասնակցություն

Հնարավորության դեպքում միջամտության շահառուները և այլ շահագրգիռ կողմերը պետք է մասնակցեն գնահատման պլանավորմանը՝ սերմանելու գնահատման արդյունքների նկատմամբ սեփականության զգացողություն: Եթե նպատակահարմար է, ապա պետք է գործադրել հատուկ ջանքեր՝ տեղեկանալու կանանց և այն խմբերի կարծիքներին, ովքեր հնարավորություն չունեն արտահայտելու իրենց տեսակետը:

Եթե գնահատումը պահանջում է շահառուների բարեկեցության փոփոխության գնահատում, ապա պետք է ապահովել, որ շահառուները (կամ նրանց ներկայացուցիչները) խորհրդատվություն ստանան և, եթե գործնականորեն հնարավոր է, մասնակցեն գնահատմանը և սահմանեն անհրաժեշտ հետագա քայլերը՝ հիմնվելով գնահատման բացահայտումների, առաջարկությունների և փորձի վրա:

Գնահատման պլանավորումը պետք է նաև թույլ տա դոնորների, ԱԳԱՄ-ների, հակաակնալին գործողությունների կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համարժեք/համապատասխան մասնակցությունը:

10.6. Գնահատման ծավալ

Պետք է զգուշությամբ հաշվի առնվել գնահատման ծավալն ու գնահատման ենթակա հարցերը՝ ապահովելու, որ անդրադարձ կատարվի ամենաօրհասական խնդիրներին: Գնահատումը պետք է առաջացնի “անհրաժեշտ է իմանալ” տեղեկատվություն՝ “լավ է իմանալ” տեղեկատվության փոխարեն:

10.7. Պատասխանատվություն

Գնահատման նախագծերը պետք է անդրադառնան ներգրավված կազմակերպությունների բնորոշ պարտավորություններին՝ պատասխանատու լինել իրենց ռեսուրսների կառավարման և նվաճած արդյունքների համար: Մա կիրառվում է երեք եղանակով՝

- ա. ԱԳԱՄ-ներն ու իրականացնող կազմակերպությունները շահառուներին ականներից տուժած համայնքներում և գոտիներում նվաճած արդյունքների մասին հաշվետվություն պետք է ներկայացնեն;
- բ. Ռեսուրսներ տրամադրողներն աջակցության որակի համար պետք է հաշվետու լինեն ստացող կազմակերպություններին հետևյալ առումով՝
 - (1) Աջակցության ճիշտ ժամանակահատված;
 - (2) Ստացող կազմակերպության փաստացի կարիքների և գերակայությունների բավարարում;
 - (3) Լրացուցիչ/անօգուտ սահմանափակումներից և զեկուցման պահանջներից խուսափում;
 - (4) Աջակցության ներդաշնակեցում՝ քաղաքականության, ընթացակարգերի, պլանավորման, զեկուցման և օգնության այլ գործակալությունների հետ համատեղման առումով;
- գ. ԱԳԱՄ-ները և իրականացնող գործակալությունները ռեսուրսներ տրամադրողներին պետք է հաշվետու լինեն այդ ռեսուրսների կառավարման և նվաճած արդյունքների համար:

11. Գնահատման նախագծում/դիզայն

11.1. Ընդհանուր

Յուրաքանչյուր գնահատում պետք է նախագծվի և տեխնիկական առաջադրանք պետք է մշակվի, որը գնահատում իրականացնողներին մանրամասն ուղեցույց կապահովի գնահատման բոլոր կողմերի վերաբերյալ: Եթե գործնականում հնարավոր է, ապա տեխնիկական առաջադրանքը պետք է մշակվի համապատասխան շահագրգիռ կողմերի հետ համատեղ (տես վերը բերված բաժին 10.4-ը): Այն տարրերը, որոնք պետք է զետեղված լինեն տեխնիկական առաջադրանքում, ներկայացվում են ստորև:

11.2. Գնահատման համատեքստ

Պետք է նկարագրվի մի ակնարկ այն համատեքստի վերաբերյալ, որում տեղի է ունենալու գնահատումը, անդրադառնալով հետևյալ թեմաներին՝

- ա. Ականների և այլ ՊՊՄ-ների նախապատմությունը;
- բ. Գնահատման ենթակա միջամտության հակիրճ պատմությունը;
- գ. Այն միջավայրի համապատասխան կողմերը, որում իրագործվում է նախագիծը կամ ծրագիրը (սոցիալական, մշակութային, աշխարհագրական և այլն, ինչպես նաև իրավական և քաղաքականության շրջանակներ);
- դ. Հիմնական շահագրգիռ կողմեր և նրանց ներգրավման բնույթը;
- ե. Կապակցված կամ լրացուցիչ գործողություններ ականներից տուժած գոտիներում (մարդասիրական, զարգացման և այլն);
- զ. Պահի դրությամբ նվաճումներ կամ հանդիպած խոչընդոտներ/խնդիրներ:

11.3. Գնահատման սուբյեկտ

Գնահատման սուբյեկտը պետք է հստակորեն նշվի (առանձին նախագիծ, հակաակնային գործողությունների ազգային քաղաքականություն կամ ծրագիր, իրականացնող գործակալություն, աջակցող կազմակերպություն, դոնորի քաղաքականություն կամ ռազմավարություն և այլն):

11.4. Գնահատման նպատակ

Գնահատման նպատակը պետք է հստակորեն սահմանվի: Նպատակը նախանշում է գնահատման այն տեսակը, որը պետք է իրականացվի (տես բաժին 7-ը), ինչու է իրականացվում գնահատումը (օրինակ՝ գործողության բարելավման պարտավորություն և/կամ ուսումնառություն), ինչպես են օգտագործվելու արդյունքները (օրինակ՝ որպես միջամտությունը շարունակելու մասին որոշման ներդրում) և ովքեր են լինելու տեղեկատվության օգտագործողները:

11.5. Գնահատման ծավալ

Ծավալը սկիզբ է առնում “նպատակից” ապահովելով գնահատման սահմանները/շրջանակը և կապ հաստատելով գնահատման խնդիրների ու չափանիշների և մասնավոր իրավիճակի միջև: Ծավալը սերտորեն կապված կլինի իրականացվող գնահատման տեսակի հետ, բայց այն պետք է ավելի հատկորոշված մանրամասներ ապահովի գնահատման ծածկույթի վերաբերյալ, օրինակ՝ որոշակի ժամանակահատված, նախագծի կամ ծրագրի իրագործման որևէ փուլ, աշխարհագրական գոտի և/կամ շահագրգիռ կողմերի ներգրավման աստիճան:

11.6. Հատկորոշիչ նպատակներ և գնահատման խնդիրներ/հարցեր

Գնահատման նպատակները պետք է իրատեսական և իրականանալի լինեն՝ հատկացված ռեսուրսների և բյուջեի, տվյալների հավանական առկայության առումով, ինչպես նաև այն տվյալների, որոնք կարող են հավաքագրվել թույլատրված ժամանակում և ռեսուրսներով: Գնահատման նպատակները պետք է բխեն/ծագեն գնահատման առաքելությունից և տեսակից: Դրանք պետք է հստակ լինեն և համաձայնեցվեն բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի հետ: Օրինակներն են՝

- Հաստատել հետևանքները (արտադրանք, արդյունք, ազդեցություն) և որակել միջամտության արդյունավետությունը, գործունեությունը և նպատակահարմարությունը;
- Ապահովել բացահայտումներ, եզրակացություններ և առաջարկություններ՝ ուղղություն տալով ապագա քաղաքականությանն ու ծրագրային որոշումներին:

Գնահատումը կարող է առաջնորդվել նաև գնահատման խնդիրներով կամ հարցերով (օրինակ՝ “արդյոք համեմատելի արդյունքները կարող էին նվաճվել առանց Միջազգային տեխնիկական խորհրդատուի” կամ “անցումը դեպի մրցակցային պայմանագրեր որքանով է նպաստում նախագծի արդյունավետությանը”): Մրանք ավելի են մանրամասնում նպատակներին ու նպաստում են ծավալի հատկանշմանը:

11.7. Գնահատման չափանիշներ

Զննման ենթակա գնահատման չափանիշները պետք է հստակորեն սահմանվեն տեխնիկական առաջադրանքում: Հակաականային գործողությունների գնահատման համար չափորոշիչ գնահատման չափանիշներն են համապատասխանությունը, գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը, կայունությունը և կիրառման դեպքում ապահովությունն ու որակը: Սակայն գնահատման ընթացքում այլ չափանիշների գնումը ևս կարող է պահանջվել, տես վերը նշված բաժին 6-ը:

11.8. Մեթոդաբանություն

Գոյություն չունի գնահատման որևէ առանձին լավագույն մեթոդաբանություն: Գնահատման մեթոդները կախված են փնտրվող տեղեկատվությունից, որոշումների կայացման ժամանակ կիրառված չափանիշներից, առկա ժամանակից և բազմաթիվ այլ գործոններից: Տվյալները պետք է մատակարարվեն տարատեսակ աղբյուրներից՝ ապահովելու դրանց ճշգրտությունը, վավերականությունն ու հուսալիությունը, և դրանով հանդերձ հաշվի են առնվում տուժած բոլոր մարդիկ և շահագրգիռ կողմերը: Հնարավորության դեպքում տեղեկատվության հնարավոր աղբյուրների հիշատակումը պետք է ներառված լինի տեխնիկական առաջադրանքում: Մեթոդաբանությունը պետք է միանշանակորեն անդրադառնա թերի ներկայացված խմբերի խնդիրներին:

Որևէ սահմանափակում ընտրված գնահատման մեթոդների նկատմամբ նույնպես պետք է հիշատակվի տեխնիկական առաջադրանքում:

11.9. Աշխատանքային պլան, կազմակերպում և աջակցման խնդիրներ

Տեխնիկական առաջադրանքը գնահատման ինդիկատիվ ծրագիր պետք է ապահովի, նշի գնահատման թիմի կազմը և խնդիրները, օրինակ՝ բյուջե, ճանապարհորդության, անվտանգության և համակարգման կազմակերպում:

11.10. Ջեկուցման պահանջներ

Տեխնիկական առաջադրանքը պետք է նշի պահանջվող զեկույցները՝ ներկայացնելու գնահատման արդյունքները և զեկուցման որևէ առանձին պահանջները, ներառյալ ներկայացման/հանձնման ժամկետը՝ ապահովելու այն փաստը, որ նախատեսված վերջնաժամկետները կարող են բավարարվել:

12. Գնահատումների իրականացում

12.1. Գնահատողների ներգրավում և աշխատանք նրանց հետ

Գնահատումը պետք է իրականացվի լավ որակավորում ունեցող թիմերի կողմից, որոնք ընտրված կլինեն թափանցիկ գործընթացի միջոցով, որը գնահատում է թիմին թե որպես մի ամբողջություն, և թե որպես առանձին անհատ անդամներ: Թիմի անդամները պետք է փորձ ունենան այն երկրներում, ուլտր(ներ)ում կամ տեխնիկական ասպարեզներում, որոնց անդրադառնում է գնահատումը, ինչպես նաև գնահատում իրականացնելու փորձ, ներառյալ կիրառման ենթակա առանձնահատուկ մեթոդաբանություններում: Արտակարգ իրավիճակներում ունեցած փորձը նույնպես կարևոր է՝ հակաակնապիս գործողությունների ծրագրերը գնահատելիս այն երկրներում, որոնք հակամարտության կամ հակամարտությանն անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում են գտնվում կամ էլ քաղաքական ծայրահեղ անկայունության պայմաններում:

Եթե իրագործելի է, ապա գնահատման թիմերը պետք է ներառեն մասնագետներ այն երկրներից կամ շրջաններից, որտեղ տեղի է ունենում գնահատումը: Պետք է նաև ապահովել, որպեսզի կանանց կարիքներն ամբողջությամբ ընդգրկված լինեն գնահատման մեջ, և որոշակի հանգամանքներում դա կարող է պահանջել որևէ կնոջ մասնակցությունը գնահատման թիմում:

Երբ գնահատողներն ընտրված կլինեն, պետք է փոխադարձ հարգանքով և վստահությամբ բնորոշել հարաբերությունները նրանց և պատվիրող կառույցի միջև: Կողմերի համատեղ պարտավորությունները պետք է ձևակերպվեն գրավոր համաձայնագրում, որը պարունակում է տեխնիկական առաջադրանքը և հետևյալը՝

- ա. Ֆինանսական ապահովումը;
- բ. Ժամանակային ծավալը;
- գ. Ներգրավված մարդիկ և նրանց դերակատարումը;
- դ. Թողարկման ենթակա զեկույցներ և այլ ապրանքներ և դրանց բովանդակությունը;
- ե. Նախաձեռնվելիք գործողությունները;
- զ. Պարտականությունների բաշխում (օրինակ՝ դեպի ականապատված երկրներ այցելությունների ժամանակ կազմակերպչական և դիմավորման արարողություններ);
- է. Ընթացակարգեր, որոնց պետք է հետևել;
- ը. Գնահատման արդյունքների նախատեսված կիրառում, ներառյալ գաղտնիության խնդիրները և մտավոր սեփականության իրավունքները:

Հնարավորության դեպքում գնահատողներից խնդրվում է և ժամանակ է պետք նրանց հատկացնել, որպեսզի նրանք գնահատման աշխատանքային պլան կամ մեկնարկի զեկույց պատրաստեն՝ նախքան տեխնիկական առաջադրանքը հաստատելու կամ անհրաժեշտության դեպքում դրանում լրամշակումների կատարումն առաջարկելու ուղղությամբ որևէ առաքելություն ստանձնելը՝ սկզբնական հանդիպումների, նախագծային փաստաթղթերի նախնական վերանայման և տվյալների, բյուջեի, այցելության երկրներում անվտանգության հիման վրա:

Տեխնիկական առաջադրանքում առաջարկվող լրամշակումները պետք է քննարկվեն պատվիրող մարմնի հետ, որն էլ գրավոր կերպով պետք է հավանություն տա բոլոր համաձայնեցված փոփոխություններին:

12.2. Գնահատման աշխատանքային պլանի մշակում

Գնահատման աշխատանքային պլանի մշակումը ներառում է սկզբնական հարցազրույցների իրականացում, փաստաթղթերի և վավերագրական հետազոտություններ և նախնական վերլուծում: Աշխատանքային պլանը ժամանակի զգալի ներդրում է պահանջում, սակայն մանրակրկիտ կերպով մշակված աշխատանքային պլանը կարող է բավականաչափ տեղեկություններ ապահովել՝ հնարավորություն տալով վերլուծական աշխատանք կատարել նույնիսկ նախքան դաշտային այցելություն կատարելը:

Չնայած նրան, որ աշխատանքային պլանները կարելի է տարբեր կերպով նախագծել՝ շեշտը դնելով այն կողմերի վրա, որոնք հատուկ են իրականացվող գնահատման տեսակին, այնուամենայնիվ հետևյալ հիմնական տարրերը պետք է սովորաբար ընդգրկված լինեն՝

- ա. Նախագծի դիզայնի և ծավալի ակնարկ;
- բ. Պատմական, տեղական, տարածաշրջանային և ազգային համատեքստի վերաբերյալ վերլուծական մեկնաբանություն;
- գ. Գնահատման տեղեկատվության օգտագործողների և գնահատման շեշտադրման հետևանքների սահմանում;
- դ. Գնահատման նպատակների ուսումնասիրման ենթակա խնդիրների վերլուծում;
- ե. Մեթոդաբանության և տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ վերլուծական մեկնաբանություն;
- զ. Գնահատման մասնակիցների սահմանում՝ նրանց դերակատարման սահմանման հետ մեկտեղ;
- է. Աշխատանքի ծրագրավորման մանրամասներ;
- ը. Զեկույցման մանրամասներ:

12.3. Գնահատման իրականացում

Գնահատումն արհեստավարժ և էթիկական ձևով պետք է իրականացվի՝ մասնակցության համապատասխան հնարավորություն ընձեռելով բոլոր ներգրավված շահագրգիռ կողմերին և հարգելով գաղտնիությունը և տեղեկություններ տրամադրողների արժանապատվությունը: Գնահատման ընթացակարգերը պետք է լինեն իրատեսական, դիվանագիտական, գենդերային և մշակութային առումով զգայուն և արտացոլեն այն մարդկանց, ում խնդրվում է տեղեկություններ հաղորդել, ժամանակի թե արժեքի նշանակության ըմբռնումը, և թե դրա նկատմամբ հարգանքը:

Գնահատման բացահայտումները պետք է պատշաճ կերպով փաստագրվեն և հիմնվեն այն թափանցիկ մեթոդների վրա, որոնք վավեր և հուսալի տվյալներ են ապահովում: Հնարավորության դեպքում կարևոր բացահայտումները պետք է հիմնավորվեն տրիանգուլացիայի միջոցով:

Գնահատողները պետք է ապահովեն գնահատման ողջ ընթացքի անկեղծությունն ու շիտակությունը: Նրանք պատասխանատու են նաև ապահովելու, որ գնահատումները լինեն անկախ, անկողմնակալ և ճշգրիտ:

Գնահատողները պետք է առավելագույն տևողությամբ ծանուցում ապահովեն, ժամանակի պահանջները հասցնեն նվազագույնի և հարգեն մարդկանց գաղտնիության իրավունքը:

Սովորաբար գնահատողները պետք է խուսափեն անհատներին գնահատելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ դա էական է՝ ըմբռնելու նախագծի հաջողության կամ հակառակի նախապատմությունը:

Ականապատված երկրում ցանկացած առաքելության ավարտին գնահատողները շահագրգիռ կողմերին պետք է ճեպագրույցի/բրիֆինգի կազմակերպում առաջարկեն: Բրիֆինգը պետք է անդրադառնա՝

- ա. Գնահատման նպատակներին;
- բ. Ուսումնասիրված առանձնահատուկ խնդիրներին;
- գ. Առաքելության իրականացմանը (ներառյալ հանդիպած խոչընդոտներին և դրանց լուծման եղանակներին);
- դ. Կարևոր բացահայտումների նախնական գնահատմանը և այն նկարագրությանը, թե հետագա աշխատանքներից ինչ է մնում կատարել;
- ե. Մոտավոր ամսաթվին, երբ գեկույցի նախագիծը կամ դրա համապատասխան հատվածները հասանելի կլինեն շահագրգիռ կողմերին ծանոթացման համար:

12.4. Զեկուցում

Գնահատման զեկույցները պետք է տրամաբանորեն շարադրված լինեն՝ պարունակելով վկայությունների վրա հիմնված բացահայտումներ, եզրահանգումներ, դասեր և առաջարկություններ, և պետք է գերծ լինեն այնպիսի տեղեկություններից, որոնք չեն համապատասխանում ընդհանուր վերլուծմանը: Զեկույցը պետք է ներկայացվի այնպիսի ձևով, որը տեղեկությունները դարձնի հասանելի և ըմբռնելի: Ընթերցողը պետք է ի վիճակի լինի հասկանալու՝

- ա. Գնահատման նպատակը;
- բ. Ինչ է կոնկրետ գնահատվել;
- գ. Ինչպես է նախագծվել և իրականացվել գնահատումը;
- դ. Ինչպիսի վկայություններ են հայտնաբերվել;
- ե. Ինչպես են այդ վկայությունները վերլուծվել;
- զ. Ինչպիսի եզրահանգումներ են կատարվել;
- է. Ինչպիսի առաջարկություններ են արվել;

ը. Ինչ դասեր են քաղվել:

Գնահատման զեկույցը պետք է պարունակի համառոտ ամփոփագիր, որն ապահովում է՝

- Գնահատման սուբյեկտի հակիրճ նկարագիր;
- Սուբյեկտի համատեքստը, ներկա իրավիճակը և նկարագիրը հարակից այլ թեմաների համեմատությամբ;
- Գնահատման նպատակը;
- Գնահատման խնդիրները;
- Զեկույցի նախատեսված լսարանը;
- Կիրառված մեթոդաբանության կարճ նկարագիր, այդ թվում նաև մեթոդաբանության ընտրության տրամաբանական բացատրությունը, օգտագործված տվյալների աղբյուրները, կիրառված տվյալների հավաքագրման և վերլուծման մեթոդները և նշանակալից սահմանափակումները;
- Ամենակարևոր բացահայտումները և եզրահանգումները;
- Հիմնական առաջարկությունները:

Գնահատման զեկույցները համատեքստի նպատակահարմար ձևով պետք է քննարկեն այն արժեքները, ենթադրությունները, տեսությունները, մեթոդները, արդյունքները և վերլուծությունները, որոնք էականորեն ներգործում են գնահատող բացահայտումների մեկնաբանության վրա:

Զեկույցը պետք է նկարագրի, թե ովքեր կան ներգրավված, նրանց դերակատարումը և ներդրումը գնահատման ենթակա սուբյեկտին, ներառյալ ֆինանսական ռեսուրսները, իրեղեն ներդրումները, տեխնիկական աջակցությունը, մասնակցությունը, անձնակազմի ժամանակը, վերապատրաստումը, առաջնորդությունը, քարոզումը, լոբինգը և առաջնային շահագրգիռ կողմերի ցանկացած ներդրում, օրինակ՝ համայնքների: Պետք է փորձ կատարվի պարզաբանելու, թե գործընկերներն ինչ են ներդրել և ստույգ որ արդյունքի համար:

Գնահատման զեկույցը պետք է բացատրություն ապահովի գնահատողների կողմից կիրառված գնահատման չափանիշների վերաբերյալ: Կարևոր է նաև, որ արժեքավոր որոշումների հիմքերը թափանցիկ լինեն: Որևէ կոնկրետ չափանիշ չկիրառելու հիմնավորումները պետք է բացատրվեն զեկույցում, ինչպես նաև չափանիշների կիրառման վերաբերյալ սահմանափակումները: Գործողության կիրառված չափորոշիչները կամ հենանիշերը նույնպես պետք է նկարագրվեն:

Մեթոդաբանության նկարագիրը պետք է զետեղված լինի զեկույցում՝ օգտագործողներին հնարավորություն տալով հանգել իրենց սեփական եզրակացություններին տվյալների որակի վերաբերյալ: Սա պետք է ներառի՝

- Տվյալների աղբյուրներ;
- Տվյալների հավաքագրման մեթոդների նկարագիր և վերլուծություն;
- Նմուշների նկարագիր (ներկայացվելիք տարածքներ և բնակչություն, ընտրության հիմնավորում և մեխանիզմներ, ընտրված համարներ, նմուշի սահմանափակումներ);

- Հղման ցուցանիշներ և հենանիշեր, եթե համապատասխանում են (նախկին ցուցանիշներ, ազգային վիճակագրություն և այլն);
- Գնահատման թիմ, ներառյալ թիմի անհատ անդամների ներգրավումը;
- Գնահատման պլան;
- Հիմնական սահմանափակումներ:

Հավելվածները պետք է ընդգրկեն հետևյալը՝

- Տվյալների հավաքագրման գործիքներ (հետազոտումներ, ստուգիչ ցուցակներ և այլն);
- Տվյալների որակի ապահովման համակարգ;
- Սահմանափակումների առավել մանրամասն քննարկում ըստ անհրաժեշտության:

Գնահատման սուբյեկտների ձեռքբերումների և խոչընդոտների պատճառները, հատկապես սահմանափակող և գործադրող գործոնները, պետք է սահմանվեն: Ձեկույցը չպետք է պարզապես իրագործման և արդյունքների նկարագիրն ապահովի, այլև խորը թաքնված պատճառների, սահմանափակումների, ուժեղ կողմերի, որոնց հիման վրա կարելի է կառուցել, և հնարավորությունների վերլուծություն: Ձեռքբերումներին և խոչընդոտներին նպաստող արտաքին գործոնները պետք է սահմանվեն և վերլուծվեն:

Գնահատման թիմի անդամները պետք է հնարավորություն ունենան իրենք իրենց տարանջատելու առանձին որոշումներից և առաջակություններից: Թիմի կազմում որևէ կարծիքի վերաբերյալ ցանկացած չլուծված տարաձայնություններ պետք է արձանագրվեն զեկույցում:

Շահերի ցանկացած բախում, լինի դա փաստացի թե թվացյալ, պետք է բացահայտորեն և ամբողջությամբ հայտարարագրվի կատարված քայլերի մասին նկարագրի հետ մեկտեղ՝ ապահովելու, որ այն չի ազդել բացահայտումների, եզրահանգումների, դասերի կամ առաջարկությունների վրա: Գնահատողները նաև պետք է զեկույցեն շահագրգիռ կողմերի կամ տեղեկատուների առնչությամբ ցանկացած փաստացի կամ ենթադրյալ շահերի բախման մասին, երբ այդ փաստացի կամ ենթադրյալ շահերի բախումը, եթե չբացահայտվի, կարող է որևէ նյութական կերպով ներազդել բացահայտումների, եզրահանգումների, դասերի կամ առաջարկությունների վրա կամ էլ վտանգել/թուլացնել գնահատման արդյունքները:

Գնահատումը պետք է այնպես նախագծվի, որ բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին զեկույցի հասանելիությունն ապահովի նախքան դրա ամփոփումը: Շահագրգիռ կողմերին պետք է հրավիրել՝ գնահատման բացահայտումների մեջ ուղղման նպատակով սահմանելու որևէ փաստացի սխալներ կամ նյութական վրիպումներ և մեկնաբանելու վերլուծությունը, եզրահանգումները, դասերն ու առաջարկությունները:

12.5. Տարածում

Գնահատման զեկույցները պետք է ամբողջությամբ կամ մասամբ տրամադրվեն շահագրգիռ կողմերին և հասանելի պետք է լինեն հակաականային գործողությունների համայնքի այլ անդամներին:

Կոմերցիայի տեսանկյունից գաղտնի տեղեկությունները և կոնֆիդենցիալ խնդիրները պետք է առանձին ներկայացվեն պատվիրող մարմնին՝ ապահովելով հիմնական զեկույցի հնարավորինս լայն տարածումը: Եթե գնահատողները բացահայտում են կեղծարարության, սխալ վարքագծի, իշխանության չարաշահման կամ մարդու իրավունքների ոտնահարման հուսալի վկայություն, ապա նրանք գաղտնի կերպով պետք է այդ խնդիրը փոխանցեն պատվիրող մարմնին և/կամ համապատասխան կառույցներին:

Եթե պատվիրող մարմինը չի ցանկանում գնահատման զեկույցը տրամադրել շահագրգիռ կողմերին կամ էլ կատարյալ դեպքում փոխանցել այն հանրային տիրույթ, ապա պետք է հաշվի առնել ամփոփագրի տրամադրումը (որն էլ այդ դեպքում պետք է մշակվի՝ հենց այդ գաղափարը մտքում ունենալով): Եթե ոչ ամբողջական զեկույցը, ոչ էլ ամփոփագիրը չեն տարածվելու, ապա գնահատողները կարող են մշակել գնահատման ստանդարտ հակիրճ նկարագիր:⁴

Որպեսզի ապահովվի գնահատման զեկույցների հասանելիությունն այն մարդկանց համար, ովքեր դրանք կարող են օգտակար համարել, պատվիրող կազմակերպությունները պետք է զեկույցը, ամփոփագիրը կամ հակիրճ նկարագիրը հանձնեն ՄԱԺՄԿ-ին՝ դրանք գետեղելու Հակասկանային գործողությունների հետազոտումների և գնահատման զեկույցների շտեմարանում (www.gichd.org/links-information-database/research-and-evaluation-reports/):

13. Գնահատման առաջարկությունների կատարում

Նախագծի կամ ծրագրի ղեկավարները պետք է արձագանքեն այն առաջարկություններին, որոնք ծագել են գնահատման արդյունքում: Դա կարող է կառավարչական պատասխանի, գործողությունների պլանի և/կամ համաձայնագրի տեսք ունենալ՝ հստակորեն նշելով պարտականություններն ու պարտավորությունները:

Այնուհետև ղեկավարության կողմից ընդունված գնահատման առաջարկությունների իրականացման հետևողական աշխատանքները պետք է համակարգված կերպով ի կատար ածվեն: Պետք է նաև տեղի ունենան գնահատման առաջարկությունների իրականացման իրավիճակի վերաբերյալ պարբերաբար զեկույցումները և դրանք ներկայացվեն կառավարող մարմիններին և/կամ կազմակերպության ղեկավարին:

14. Գնահատման սուբյեկտների/առարկաների իրավունքներ և պարտավորություններ

14.1. Ընդհանուր

ԱԳԱՄ-ները, ՀԱԿ-երը, իրականացնող կազմակերպությունները և գնահատման այլ սուբյեկտները պարտավոր են հաշվետու լինելու այն արդյունքների համար, որոնք ձեռք են բերվել իրենց տրամադրված հանրային (տեղական և միջազգային) ռեսուրսների միջոցով, և գնահատումը հաշվետվության այդ գործընթացի առանցքային տարրն է:

Գնահատման սուբյեկտները պարտավոր են համագործակցել գնահատողների թիմի հետ, եթե նրանց համապատասխան ծանուցում տրամադրվի, հնարավորություն ընձեռվի տեխնիկական առաջադրանքը վերանայել և դիտողություններով հանդես գալ, ինչպես նաև իրենց ցանկությամբ տեխնիկական առաջադրանքում գնահատման լրացուցիչ խնդիրներ կամ հարցեր առաջարկել: Գնահատման սուբյեկտներն իրավունք ունեն ակնկալելու, որ գնահատման թիմը համապատասխան մոտեցում կցուցաբերի ղեկավարությանն ու անձնակազմին ներկայացված ժամկետային պահանջների նկատմամբ:

4. Տեղեկությունների համար տես Ջարգացման և համագործակցության շվեյցարական գործակալություն, 2005թ., Գնահատման հակիրճ նկարագիր մշակելու մատրիցը, www.sdc.admin.ch/ressources/deza_product_en_1496.doc կամ CIDA, Ինչպես իրականացնել գնահատում, մաս 9-րդ՝ մոդելային հակիրճ նկարագրեր, [www.acdi-cida.gc.ca/INET/IMAGES.NSF/vLUIImages/Performancereview3/\\$file/Number_9.pdf](http://www.acdi-cida.gc.ca/INET/IMAGES.NSF/vLUIImages/Performancereview3/$file/Number_9.pdf) կայքէջը:

14.2. Հնարավորություններ

Գնահատումն արտակարգ հնարավորություն է ընձեռում ճանաչել ձեռք բերած հաջողությունները՝ դյուրին դարձնելով դոնորների և ազգային կառավարության կողմից տրամադրվող շարունակական կամ կատարելագործված աջակցության ապահովումը: Գնահատումն արտակարգ հնարավորություն է ընձեռում նաև գնահատման սուբյեկտ(ներ)ին իրենց տեսակետները բացատրել անկողմնակալ գնահատողներին, թե որքան հաջող է նախագծվել նախագիծը, ծրագիրը կամ քաղաքականությունը, ինչպիսի չկանխատեսված միջոցառումներ են տեղի ունեցել, որոնք հանգեցրել են իրագործման խնդիրներին կամ հնարավորություններին, և գործողության բարելավման առումով ինչպիսի փոփոխություններ են առաջարկում նրանք:

Գնահատման սուբյեկտները կարող են առավելագույնս օգտվել այս հնարավորություններից՝

- a) Ներմուծելով մի որակյալ համակարգ՝ մոնիտորինգի գործընթացից դեպի պլանավորված նպատակները (արտադրանք, արդյունքներ և ազդեցություն);
- b) Արձանագրելով իրագործման ընթացքում հանդիպած խոչընդոտները և դրանց լուծման համար նախաձեռնված գործողությունները;
- c) Կառուցողական քննադատությամբ հանդես գալով գնահատման տեխնիկական առաջադրանքի նախագծի նկատմամբ՝ ապահովելու նրանց տեսանկյունից ամենակրիտիկական խնդիրների ընդգրկումը;
- d) Լավ պատրաստված լինելով բուն գնահատման առաքելության համար;
- e) Կառուցողական քննադատությամբ հանդես գալով գնահատման զեկույցի նախագծի նկատմամբ:

15. Պարտավորություններ

15.1. Միավորված ազգերի կազմակերպություն

Այնտեղ, ուր ՄԱԿ-ը գործում է ԱԳԱՄ-ի անունից կամ աջակցում է ԱԳԱՄ-ին/ՀԱԿ-ին հակաականային գործողությունների ազգային կարողությունների զարգացման հարցում, ՄԱԿ-ը պետք է երաշխավորի աջակցվող ծրագրերի կամ նախագծերի պարբերական (օրինակ՝ երեք տարին մեկ անգամ) և անկախ գնահատումը՝ ապահովելու ազգային սեփականության ձեռքբերումը:

Հնարավորության դեպքում ՄԱԿ-ը պետք է ապահովի, որ գնահատման արդյունքները տրամադրվեն և հասանելի լինեն շահագրգիռ կողմերին, և որ գործողություններ նախաձեռնվեն գնահատման առաջարկությունների և քաղած դասերի ուղղությամբ:

15.2. Հակաականային գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ դրա անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- ա) խրախուսի հակաականային գործողությունների ծրագրերի և նախագծերի գնահատումը և ապահովի, որ հակաականային գործողությունների կազմակերպությունները պայմաններ ստեղծեն նախագծերի գնահատման համար;
- բ) ապահովի, որ գնահատումն օգտակար լինի բազմաթիվ շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև ականներից տուժած համայնքներին, հակաականային գործունեությունը հովանավորող դոնոր գործակալություններին, կառավարությանը և դրա աջակից մարմիններին, օրինակ՝ ԱԳԱՄ և ՀԱԿ, և իրականացնող գործակալություններին;

- զ) գնահատի իր սեփական գործողությունները որպես հակաականային գործողությունների ազգային պլանի մի մաս;
- դ) նպաստի տեղեկատվության փոխանակմանը՝ տարածելով գնահատման զեկույցներն ու քաղած դասերը հակաականային գործողությունների այլ կազմակերպությունների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի միջև, ինչպիսիքն են ազգային իշխանություններն ու դոնորները՝ ապահովելով, որ տեղի չունենա գաղտնի տեղեկությունների արտահոսք: Այն կարող է հավաքագրել արդյունքները և տարածել դրանք որպես «քաղած դասեր»:
- ե) ապահովի, որ գործողություններ նախաձեռնվեն գնահատման բացահայտումների ուղղությամբ:

15.3. Հակաականային գործողությունների կազմակերպություններ

Հակաականային գործողությունների նախագծերի իրականացնող կազմակերպությունները՝

- ա) պետք է գնահատեն իրենց սեփական առաջընթացն ըստ նպատակների և պետք է գնահատեն արդյունքները ու, եթե իրագործելի է, իրենց միջամտության ազդեցությունը/հետևանքները: Նրանք պետք է համարժեք կերպով պլանավորեն գնահատումը և հասանելի դարձնեն պահանջվող անհրաժեշտ ռեսուրսները;
- բ) պետք է ապահովեն, որ գնահատման գործընթացում ներգրավված լինեն համապատասխան շահագրգիռ կողմերը: Մասնավորապես նրանք պետք է ապահովեն համայնքի մասնակցությունը և խրախուսեն գնահատման կիրառումը որպես կրթական գործընթաց՝ ստեղծելու համայնքի անդամների և հակաականային գործողությունների կազմակերպությունների անձնակազմի կարողությունները;
- գ) պարտավորվում են ապահովել, որ գնահատողները (ներառյալ արտաքին խորհրդատուները) պատշաճ կերպով տեղեկացված լինեն և աջակցություն ստանան և արհեստավարժ ու անկողմնակալ վարքագիծ դրսևորեն՝ համաձայն ՀԱԳՄՉ-երին և/կամ գնահատման ազգային չափորոշիչներին;
- դ) պետք է ապահովեն գնահատման արդյունքների կիրառումը: Գնահատումը պետք է փոխկապակցված լինի կարիքների գնահատման և նախագծի պլանավորման փուլերի հետ՝ երաշխավորելու, որ նախաձեռնվեն նպատակահարմար հետագա գործողություններ;
- ե) պետք է ապահովեն գնահատման արդյունքների տարածումը. զեկույցները լինեն թափանցիկ և հասանելի (հնարավորության դեպքում շահագրգիռ կողմերի համաձայնությամբ); գնահատումից քաղած ընդհանուր դասերը փոխանակվեն ԱԳԱՄ-ի կամ հակաականային գործողությունների համակարգման այլ մեխանիզմների միջոցով:

15.4. Դոնորներ

Եթե նպատակահարմար է, ապա դոնոր կազմակերպությունները պետք է ապահովեն, որ նախագծերն ունենան գնահատման բաղադրիչ և անհրաժեշտ ռեսուրսներ՝ դրանք նախաձեռնելու համար: Նրանք պետք է գնահատեն նաև իրենց կողմից ֆինանսավորված նախագծերը և հաշվի առնեն գնահատման բացահայտումներն ու առաջարկությունները՝ հակաականային գործողությունների ծրագրերի հետագա ֆինանսավորման համար:

15.5. Գնահատման թիվ

Քանի որ գնահատման թիվի պարտավորությունները կարող են տարբեր լինել՝ կախված հակաակնաչափ գործողությունների գնահատման տեսակից և նպատակներից, հետևյալը որպես ընդհանուր ուղեցույց նկարագրում է այն հիմնական առաջադրանքները, որ գնահատման թիվը կարող է նախաձեռնել գնահատման ժամանակ:

- ա. Վերանայել և միավորել տեղեկությունները նմանատիպ բնույթի բոլոր ակնարկներից, գնահատումներից և ուսումնասիրություններից, որոնք նախկինում են նախաձեռնվել⁵:
 - բ. Մահմանել շահագրգիռ կողմերի լայն շրջանակ և խորհրդակցել նրանց հետ, այդ թվում նաև կառավարության, դոնորների, հակաակնաչափ գործողությունների օպերատորների և խաղաղության հաստատման և զարգացման մեջ ընդգրկված քաղաքացիական հասարակության հետ:
 - գ. Վերլուծել հակաակնաչափ գործողությունների ոլորտում կառավարության պարտավորությունները (դաշինքների վավերացում, իրագործման կարգավիճակ) և ցանկացած կատարվելիք փոփոխություններ, եթե երկիրն ավելացնի/ընդարձակի իր ազգային պարտավորությունները:
 - դ. Տեղեկատվություն հավաքագրել ուղղակի շահառուներից:
 - ե. Վերլուծել գնահատման ենթակա ծրագրի կամ նախագծի ներկայիս կառուցվածքն ըստ կանոնակարգային և գործառնական մակարդակների՝ ներառելով կոմերցիոն և մարդասիրական գործողությունները, կառավարման և համակարգման մեխանիզմները և որակի կառավարումը:
 - զ. Վերանայել տեխնիկական և կառավարչական կարողությունների բնույթն ու ծավալը:
 - է. Քննարկել դոնորների գերակայություններն ու նպատակները:
 - ը. Վերանայել ծրագրի կամ նախագծի ռեսուրսների անցած և ներկայիս գործուղումը՝ ներառելով գերակայությունների սահմանումը, հաշվետու լինելը և թափանցիկությունը:
 - թ. Վերանայել զարգացման ներկայիս համատեքստը և կատարել ապագա համատեքստի վերլուծություն:
 - ժ. Կատարել ապագայի հետ կապված առաջարկություններ՝ հաշվի առնելով քաղած դասերը և ռեսուրսների առկայության ներկայիս միտումները:
- ժա. Շահագրգիռ կողմերի դիտողություններն ընդգրկել գնահատման մեջ:
- ժբ. Ներկայացնել գնահատման վերջնական զեկույցը:

⁵ ՄԱԺՄԿ-ը տվյալների շտեմարան է վարում, որը հակաակնաչափ գործողությունների ուսումնասիրությունների և գնահատումների վերաբերյալ հարյուրավոր զեկույցներ է պարունակում, տես www.gichd.org/links-information-database/research-and-evaluation-reports/ կայքէջը:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան:

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- բ) Ջարգացման աջակցության կոմիտե (ՋԱԿ), Ջարգացման աջակցության գնահատման սկզբունքներ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ, OECD), 1991թ.;
- գ) Ջարգացման աջակցության կոմիտե (ՋԱԿ), Բարդ արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության գնահատման ուղեցույց, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), 1999թ.;
- դ) Ջարգացման աջակցության կոմիտե (ՋԱԿ), Գնահատման և արդյունքների վրա հիմնված կառավարման հիմնական տերմինների հավաքածու, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), 2002թ.;
- ե) ՄԱԿ-ի Գնահատման խումբ (ՄԱԿԳԽ), ՄԱԿ-ի համակարգում գնահատման չափորոշիչներ;
- զ) ՄԱԿ-ի Գնահատման խումբ (ՄԱԿԳԽ), ՄԱԿ-ի համակարգում գնահատման նորմեր:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Կարևոր կայքէջեր՝

Հակաականային գործողությունների հետազոտությունների և գնահատման զեկույցների շտեմաբան (www.gichd.org/links-information-database/research-and-evaluation-reports/):

Հակաականային գործողությունների գնահատումների և ուսումնասիրությունների օրացույց (www.gichd.org/calendars/evaluations-and-studies-calendar/):

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասկացումներ

B.1.

Աուդիտ

Կառավարման վերահսկման համարժեքության գնահատում՝ ապահովելու ռեսուրսների տնտեսողական և գործունյա օգտագործումը, ակտիվների/միջոցների ապահովության երաշխավորումը, ֆինանսական և այլ տեղեկությունների արժանահավատությունը, համապատասխանեցումը կանոնակարգերին, կանոններին և սահմանված քաղաքականությանը, ռիսկի կառավարման արդյունավետությունը և կազմակերպական կառուցվածքների, համակարգերի և գործընթացների համարժեքությունը:

B.2.

Դոնոր

Ֆինանսավորման բոլոր աղբյուրները, այդ թվում նաև ականապատված պետությունների կառավարությունը:

B.3.

Գենդերային ուղղորդում

Որևէ պլանավորված գործողության վրա կանանց և տղամարդկանց ազդեցության գնահատում: Ականագերծման գործողությունների դեպքում գենդերային ուղղորդման ուշադրության կենտրոնում պետք է լինի, որ երկու սեռերի մտահոգություններն ու փորձը հաշվի առնվի ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման ժամանակ:

B.4.

Գնահատում

Ընթացիկ կամ ավարտված նախագծի, ծրագրի կամ քաղաքականության, դրա դիզայնի, իրագործման և արդյունքների հնարավորինս համակարգված և օբյեկտիվ գնահատումն է: Դրա խնդիրն է սահմանել նպատակների կարևորությունն ու իրականացումը, զարգացման գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և հաստատուն կայունությունը: Գնահատումը պետք է վստահելի և օգտակար տվյալներ ապահովի՝ հնարավոր դարձնելով քաղած դասերի ներառումը թե աջակցություն ստացողների, և թե դոնորների կողմից որոշումներ ընդունելու գործընթացում:

Նշում՝ Սահմանումը բերված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Զարգացման աջակցության գնահատման սկզբունքներից», ԶԱԿ (DAC), 1991թ.:

B.5.

Մոնիտորինգ

Գնահատման համատեքստում այս տերմինը նշանակում է շարունակական մի գործառույթ, որը հատկորոշված ցուցանիշների վերաբերյալ տվյալների համակարգված հավաքագրում է կիրառում՝ ընթացիկ միջամտության դեկավարներին ու հիմնական շահագրգիռ կողմերին ապահովելու նպատակների առաջընթացի և նվաճման ծավալի, ինչպես նաև հատկացված ֆինանսների օգտագործման առաջընթացի մասին ցուցանշումներով:

հակաակնային գործողությունների օպերացիաների համատեքստում այս տերմինը նշանակում է թույլատրված դիտարկում, ստուգում կամ գնահատում աշխատակետերի, հարմարությունների, սարքավորումների, գործողությունների, գործընթացների, ընթացակարգերի և թղթաբանության ոլորտներում որակավորում ունեցող անձնակազմի կողմից՝ առանց պատասխանատվություն կրելու, թե ինչն է մոնիտորինգի ենթարկվում: Մոնիտորինգը սովորաբար իրականացվում է՝ ստուգելու համաձայնեցումը պարտավորությունների, ընթացակարգերի կամ չափորոշիչ փորձի հետ, և հաճախ ներառում է արձանագրման և զեկուցման բաղադրիչներ:

ԱՎԻ-ի համատեքստում այս տերմինը նշանակում է տեղի ունեցող երևույթների չափման կամ դիտարկման գործընթաց: Այն իր մեջ ներառում է.

- ա. Չափման առաջընթացը միջամտության իրականացման պլանի կապակցությամբ՝ ծրագրեր/նախագծեր/գործողություններ, ռազմավարություն, քաղաքականություն և առանձնահատուկ նպատակներ;
- բ. Փոփոխության չափում որևէ պայմանի կամ պայմանների խմբի դեպքում կամ դրանց բացակայության դեպքում (օրինակ՝ երեխաների կամ կանանց իրավիճակի փոփոխություն կամ էլ փոփոխություն երկրի ավելի լայն մասշտաբի համատեքստում):

Նշում՝ Սահմանումը սկիզբ է առնում UNICEF-ի “Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկից”:

B.6.

Քաղաքականություն

սահմանում է կազմակերպության նպատակներն ու խնդիրները և նախանշում է գործունեության կանոնները, չափորոշիչներն ու սկզբունքները, որոնք թելադրում են այն ուղին, որով կազմակերպությունը նպատակադրվում է հասնել այդ նպատակներին:

Նշում՝ Քաղաքականությունը զարգանում է ի պատասխան ռազմավարական ուղղության և դաշտային փորձի: Իր հերթին այն ազդեցություն է գործում ծրագրերի զարգացման վրա և ռեսուրսների մոբիլիզացման ու կիրառման վրա: Քաղաքականությունը պարտադիր բնույթ ունի և դրան հետևելը ենթադրվում է կամ առնվազն խրախուսվում:

B.7.

Ծրագիր

Նախագծերի կամ գործողությունների մի խումբ, որոնք համակարգված ձևով են կառավարվում՝ այնպիսի օգուտներ ապահովելու, որոնք հնարավոր չէին լինի, եթե այն նախագծերը և/կամ պայմանագրերն անկախ ձևով կառավարվեին:

Զարգացման ծրագիրը սահմանափակ տևողությամբ և բազմատեսակ գործողություններ ներառող միջամտություն է, որը կարող է հատել ոլորտներ, թեմաներ և/կամ աշխարհագրական գոտիներ:

Նախագիծ

Մի աշխատանք է, որում մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները կազմակերպված են՝ նախաձեռնելու աշխատանքի մի ուրույն ծավալ, տվյալ առանձնահատկությամբ, ծախսերի և ժամանակի սահմանափակումներով՝ հանգելու բարենպաստ փոփոխությունների, որոնք սահմանվել են քանակական և որակական նպատակներով:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ